ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 54

16/11/2018

05-013-0224-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով , ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1918-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով հողամասի սեփականատեր Արայիկ Հրաչիկի Խաչատրյանի 15.11.2018թ. դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Աստղաձոր համայնքի շահերից ելնելով հավանություն տալ քաղաքացի Արայիկ Հրաչիկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող 05-013-0224-0001 ծածկագրով 0.21 հա մակերեսով վարելահողի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսականից փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակությանը , իսկ գործառնական նշանակությունը՝ վարելահող հողերի կազմից փոխադրել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության: Հողամասի վրա առկա է ընդհանուր 489.48 քմ. արտաքին չափերով ինքնակամ շենք-շինություններ:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին գործընթացը կազմակերպելու համար համապատասխան հողաշինարարական գործերը ներկայացնելու Գեղարքունիքի մարզպետին՝ ՀՀ Կառավարության ,,Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման,, միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

2. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ

3. ԱՐՇԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ

4. ԴԱՎԵՅԱՆ ՄԱՆՎԵԼ

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ

6. ԿՆՅԱԶՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ